ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 2

ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏ

23 հոկտեմբեր 2020թ. ք.Իջևան

Նախագահ՝ Ա.Շ.Մարգարյան

Քարտուղար՝ Ք.Հ.Մխիթարյան

Կիրառական արվեստի ֆակուլտետի խորհրդի նիստին մասնակցում էին գիտական խորհրդի բոլոր անդամները:

Օրակարգ

1. 2019-2020 ուստարվա երկրորդ կիսամյակի լուծարքային շրջանի ամփոփման մասին /Զեկուցող՝ Վ. Աղաբաբյան /:
2. Առաջին ընթացիկ քննությունների և ստուգումների նախապատրաստական աշխատանքների մասին /Զեկուցող՝ Վ. Աղաբաբյան/:
3. Ավարտական աշխատանքների և հետազոտական բաղադրիչների թեմաների հաստատում:
   / Զեկուցող՝ Վ. Աղաբաբյան /
4. Ամբիոնների 2020-2021 ուստարվա աշխատանքային պլանների հաստատման մասին: / Զեկուցող՝ Վ. Աղաբաբյան /
5. Կիրառական արվեստի ֆակուլտետի 2020-2021 ուստարվա I կիսամյակի աշխատանքային պլանի քննարկման և հաստատման մասին:
   / Զեկուցող՝ Վ. Աղաբաբյան /
6. Ամբիոններում 2020-2021 ուստարվա առարկայական փաթեթների առկայության մասին: /Զեկուցող՝ ամբիոնի վարիչներ/

ԼՍԵՑԻՆ.

Ֆակուլտետի խորհրդի նիստը բացեց և օրակարգը ներկայացրեց դեկանի ժ/պ, խորհրդի նախագահ Ա.Շ.Մարգարյանին փոխարինող Վ. Աղաբաբյանը, քանի որ Ա. Մարգարյանը ներգրավված է ռազմական գործողություններում:

Օրակարգը հաստատելուց հետո նիստի մասնակիցները անցան օրակարգի հարցերի քննարկմանը:

Օրակարգի առաջին հարցի վերաբերյալ Վ.Աղաբաբյանը ներկայացրեց 2019-2020 ուստարվա երկրորդ կիսամյակի լուծարքային շրջանի ամփոփումը: Նա նշեց, որ լուծարքային շրջանը կազմակերպվել է Zoom հարթակի միջոցով՝ ժամանակացույցի համապատասխան, խախտումներ և բացթողումներ չեն արձանագրվել: Զեկուցողը ըստ կուրսերի ներկայացրեց լուծարքային շրջանի ընդհանուր պատկերը՝
դիզայն I կուրսում 2 ուսանող, II կուրսում 1 ուսանող, III կուրսում 2 ուսանող: Բոլոր ուսանողները վերահանձնել են լուծարքը, ֆակուլտետում ակադեմիական պարտք ունեցող չկա:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

ՀԴՄ անդամ Գ. Ջավրուշյանը, ՀԴՄ անդամ Ք. Մխիթարյանը, ՀՆՄ անդամ Ան. Չիբուխչյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ .

2019-2020 ուստարվա երկրորդ կիսամյակի լուծարքային շրջանի ընթացքը համարել բավարար:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի 2-րդ հարցի վերաբերյալ զեկուցող Վ.Աղաբաբյանը ներկայացրեց 2020-2021 ուստարվա առաջին կիսամյակի առաջին ընթացիկ քննությունների և ստուգումների ժամանակացույցը: Զեկուցողը նշեց, ելնելով համավարակից, ԵՊՀ գիտխորհրդի կողմից որոշվել է, որ յուրաքանչյուր կուրսի համար ընթացիկ քննությունների և ստուգումների թիվը չգերազանցի երեքը: Նա նշեց, որ առարկաների

ընտրությունը քննարկվել է ուսանողների հետ: Բացի այդ՝ քննությունները կիրականացվեն հեռահար եղանակով՝ ZOOM հարթակի միջոցով:

Զեկուցողը փաստեց, որ առաջին ընթացիկ քննությունների և ստուգումների հարցաշարերը ժամանակին տրամադրվել են ուսանողներին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.
ՀՆՄ անդամ Հ.Ասատրյանը, ՀԴՄ անդամ Գ. Ջավրուշյանը, Ք.Մխիթարյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ .
2020-2021 ուստարվա առաջին կիսամյակի առաջին ընթացիկ քննությունների և ստուգումների նախապատրաստական աշխատանքների ընթացքը համարել բավարար:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի 3-րդ հարցի վերաբերյալ դեկանին փոխարինող Վ. Աղաբաբյանը ներկայացրեց ֆակուլտետում ուսուցանվող կրթական ծրագրի կողմից տրված ավարտական աշխատանքների և հետազոտական բաղադրիչների թեմաները: Գիտական ղեկավարների կողմից առաջադրված թեմաները նախապես քննարկվել են ամբիոններում, համապատասխանում են գիտականության չափորոշիչներին, արդիական են:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.
Ավարտական աշխատանքների և հետազոտական բաղադրիչների ղեկավարները նշեցին, որ ամբիոններում քննարկվել են թեմաների վերնագրերը, հստակեցվել ներկայացվող պահանջները:

ՈՐՈՇԵՑԻՆ.
Հաստատել 2020-2021 ուստարվա ավարտական աշխատանքների և հետազոտական բաղադրիչների թեմաները:

ԼՍԵՑԻՆ.
Օրակարգի 4-րդ հարցի վերաբերյալ ֆակուլտետի դեկանին փոխարինող Վ. Աղաբաբյանը արձանագրեց, որ կիսամյակի կտրվածքով ամբիոնների աշխատանքային գործունեության պլանավորման անհրաժեշտությունը դարձել է կարևոր խնդիր: Համավարակի և հեռավար ուսուցման պայմաններում դա առավել ևս կդյուրացնի

ամբիոնների աշխատանքների կանոնակարգումը և վերահսկողությունը: Ամբիոնների աշխատանքային պլանները քննարկվել են ամբիոնային նիստերում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

ՀԴՄ անդամ Գ. Ջավրուշյանը, ՀՆՄ անդամ Ան. Չիբուխչյանը, ՀԴՄ անդամ Ք. Մխիթարյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Հաստատել Կիրառական արվեստի ֆակուլտետի ամբիոնի 2020-2021 ուստարվա աշխատանքային պլանները:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի 5-րդ հարցի վերաբերյալ զեկուցեց ֆակուլտետի դեկանին փոխարինող Վ. Աղաբաբյանը: Զեկուցողը նշեց, որ համավարակի պայմաններում ֆակուլտետի 2020-2021 ուստարվա ուսումնական գործունեությունը կազմակերպված և նպատակային վարելու առումով աշխատանքային պլանում կատարվել են որոշակի փոփոխություններ: Այս փոփոխությունները թույլ են տալիս ֆակուլտետի գործունեությունը դարձնել առավել ճկուն և արդյունավետ: Զեկուցողը հայտնեց, որ աշխատանքային պլանը նախապես քննարկվել է դեկանատի նիստում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

ՀԴՄ անդամ Գ. Ջավրուշյանը, ՀՆՄ անդամ Հ. Ասատրյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Հաստատել Կիրառական արվեստի ֆակուլտետի 2020-2021 ուստարվա առաջին կիսամյակի աշխատանքային պլանը:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի 6-րդ հարցի վերաբերյալ զեկուցեցին ամբիոնի վարիչ Հ Ասատրյանը: Նա նշեց, որ ամբիոններում առարկայական փաթեթները հիմնականում առկա են: Ընթացքի մեջ են այն փաթեթները, որոնց ուսումնական պլաններում փոփոխություններ են տեղի ունեցել:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

ՀԴՄ անդամ Գ. Ջավրուշյանը, ՀՆՄ անդամ Հ. Ասատրյանը, ՀԴՄ անդամ Ք.Մխիթարյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Ամբիոններում առարկայական փաթեթների վիճակը համարել բավարար:

ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա.Մարգարյան

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ք.Մխիթարյան